Infrastructure policies will be continuous and with increased efficiency of public spending will be directed at the sustainable development of potable water, irrigation systems and roads, implying that the state should carry out current repairs and maintenance and capital spending for creating new infrastructure.

In municipal water and sanitation sector 5 companies provide water supply and sanitation services.

Implementation of continuous reforms and new investment projects, and efficient management of water systems through wider private sector involvement, lie at the heart improvement and financial sustainability in potable water supply and sanitation sectors.

The Government will make efforts through the use of various tools and principles, including through public-private partnership cooperation, with the investment policies supported by loan proceeds, to increase the level of cost recovery of companies and the quality of provided services.

In recent years a number of actions and projects have been implemented to achieve sustainability in the potable water supply and sanitation sector, which are continuous in nature. These actions and projects are aimed at improving recording systems, ensuring that water supply and sanitation are reliable, uninterrupted and safe, improving the quality of provided services, and professional capacity of the staff

providing the services. Projects implemented with the use state, investment and loan funds targeting the improvement in water supply and sanitation are aimed at addressing these issues.

In irrigation sector, two water intake companies and 37 water users associations are the suppliers of water supplying irrigation water to final users, and it is also planned to build new reservoirs: Vedi, Kaps, Eghvard, and Mastara.

In recent years activities for improving and reconstructing existing systems and build new ones have been undertaken in irrigation sector through the World Bank, Millennium Challenges and a number of other projects. As a result, internal networks, primary canals and pumping stations were built for irrigation. The reservoir in Marmarik has been reconstructed.

In irrigation sector, as already mentioned, it is planned to build new reservoirs, upgrade the existing infrastructure, deepen institutional reforms, strengthen participatory management and introduce a new level of highly transparent relations with water users.

Transport Sector

In recent years the RA Government has made significant investment in the sector for road rehabilitation and modernization funded by the RA State Budget, the WB and ADB. In forthcoming years the development of the road sector will be one of the Government priorities.

In order to put spending on the road infrastructure on solid basis, a road financing study was carried out. Based on the recommendations of study the RA Government issued Decree No. 873-N of June 25, 2015 on Approving the 2015-2025 Financing Strategy for Maintenance of State Road of General Use in the Republic of Armenia.

By December 31, the road asset management system will be introduced and operated to make the management of road assets more efficient, helping in decision-making on road infrastructure financing.

Based on advanced international experience, a uniform bidding package and performance based contracting for the procurement of road rehabilitation and maintenance works will be developed and piloted. Based on the latter, sustainable financing will be provided for rehabilitation, maintenance and operation, more effective asset management and current maintenance and operation of 55 percent of interstate and lifeline roads in the Republic of Armenia.

Territorial Development without Disparities

Territorial development without regional disparities is among the most critical tasks of the RA Government in coming years. To this end relative advantages of regions (marzes) will be assessed and development programs will be implemented based on them.

We attach high importance to both territorial development without disparities and also an increase in the efficiency of their use. In this context, it is planned to establish a methodology enabling to assess the effectiveness of capital investment in the region within the poverty reduction context.

Pursuant to RA Government Decree No. 1521-N of December 25, 2014 the Armenia Social Investment Fund (ASIF) was renamed into Armenia Territorial Development Fund with new edition of the new charter approved by the Government Decree N. 690-N of June 25, 2015. Presently, the authority to implement the World Bank funded Social Investment and Local Development Project implementation has been entrusted with the Armenia Territorial Development Fund.

The set of tools anticipated under the Armenia Territorial Development Fund will evaluate the focus of envisaged programs on addressing the objectives of achieving development and addressing disparities indicated above as well as effectiveness of implemented capital investment.

Administrative and Territorial Reforms

Administrative and territorial reform has key importance for ensuring that the policy on strengthening the local democracy, developing the local government system and decentralizing power is carried out in an effective and coordinated manner.

It is planned to use the international experience in local government, particularly the scope for deepening decentralization of power, through analysis, adaptation and introduction of such experience. The reform will address priority issues of local government development and power decentralization policy, prerequisites for financial decentralization, building capacity for local governments and development of local democracy, transparency and accountability of local government operations, financial independence and autonomy of municipalities will significantly increase. As a result of consolidation of communities the system of proportional representation will be gradually introduced.

The main objective of the reform is strengthening the capacity of municipalities, which would improve spending efficiency of municipalities and contribute to improvements in the quality of services provided to the population at the level of local government.

Reforms Undertaken as Part of Completion of Prior Actions under the Third Development Policy Operation

In the context of the reforms above, once again an emphasis should be made on the reforms implemented as part of completion of prior actions under the third Development Policy Operation, namely:

1. The Draft RA Tax Code was approved by the RA Government on October 8, 2015 and put forward to a wide discussion. The Government has committed to discussing in detail justified proposals of all partners including international organizations and specialized organizations;

2. The Electricity tariff was increased as per Resolution No. 174 of June 17, 2015 of the State Public Services Regulatory Committee.

3. The RA Law on Social Services enacted by the National Assembly on December 17, 2014 and effective January 1, 2015 provides the legal basis for the provision of integrated social services. During 2015 key legal acts for the enforcement of this law were adopted (RA Government Decrees: No. 582-N of June 4, 2015; No. 984-N of August 31, 2015, No. 1061-N of September 10, 2015 and No. 1044-N of September 10, 2015).

4. The law on amendments to the Waste Management was enacted following the National Assembly adoption on June 22, 2015. Together with the Republic of Armenia Law on Environmental Impact Assessment and Expertise, amendments, it supplements amendments introduced in the Mining Code of the Republic of Armenia. Decrees No. 1038-N, 1042-N, 1043-N and 1045-N issued by the RA Government on September 10, 2015, as well as Natur Protection Minister's Orders No 243-N and 244-N issued on August 20, 2015 regulate mining waste disposal and management processes.

5. Implementation of the third generation reforms for providing continuity to inspection reforms, in line with the new law on Inspection Bodies approved on December 17, 2015 and the strategy, as already mentioned, envisages a modern and efficient system of inspection by addressing the legal status of inspection authorities, their establishment (with or without mergers on a case by case basis), their management, principles and specifics of organizing their operation, as well as creating a unified information system for data exchange. To this end, as a "proof" of reform implementation that would enable the use of practical solutions in other inspectorates to be established in the near future, the Government Decree No. 1063-N of September 10, 2015 approved the establishment of the Market Surveillance Inspectorate, the Charter and Structure of the Market Surveillance Inspectorate. The Government Decree No. 677-N and 678-N of June 18, 2015 as well as the economy Minister's Order No 856-A issued on June 29, 2015 created the required regulatory framework for implementation of the Law on Inspection Bodies.

6. On May 7, 2015 the National Assembly ratified the package on introducing amendments to the RA Law on Trade and Services as well as approved the Law on Business Notifications, replacing the licensing requirement for a number of activities with notifications by introducing a simplified mechanism.

7. Given the Republic of Armenia Law on Electronic Document and Electronic Digital Signature and in view of the principles defined in the Republic of Armenia Law on the Protection of Personal Data, on August 31, 2015 the Government of the Republic of Armenia issued Decree No. 1093-N on Establishing General Security, Interoperability and Technical Requirements for Electronic Systems Used for the Provision of Electronic Services of Actions by State or Local Government Bodies.

8. As part of trade facilitation activities, in order to streamline the customs procedures for electronic trade, on December 18, 2014 the Government issued Decree No. 1461-N on *Establishing Forms of Simplified Customs Declarations for Goods Transported via International Postal or Courier Dispatches across the Customs Territory of the Republic of Armenia by Natural Persons or Legal Entities*; it enables the use of Forms CN 22, CN 23 and CP 72 introduced by regulations of the Universal Postal Union as well as the simplified forms of customs declarations for goods imported by natural and legal persons via international postal or courier dispatches.

The first steps for the introduction of the Authorized economic operators (AEOs) have been taken by the Law No. HO-46-N of May 20, 2014 on Amendments and Supplements to the Republic of Armenia Customs Code; it stipulated the concept of Authorized Economic Operators in the RA Customs Code, the criteria set for foreign operators for obtaining AEO status, simplified customs procedures in place for AEOs, etc.

The following documents were passed for the practical introduction of AEOs - the Government Decree No. 590-N issued On May 21, 2015, and the Minister of Finance Orders Nos 392-A and 389-A issued on June 15, 2016 and Nos 583-N and 584-N issued on August 26, 2015.

9. Full legal basis for aviation modernization process was provided by passage of the Republic of Armenia Law on Amendments to the Republic of Armenia Law on Aviation by the National Assembly and effective August 1, 2015. The RA Government adopted associated secondary legislation (RA Government Decrees No. 963, 964 and 965) on August 6, 2015 to ensure that the norms in the law above are properly enforced.

10. For the purpose of introducing applicable regulations for registration of secured interest in movable property, a Law on Registrato of Secured Interest on Movable Property was enacted on December 17, 2014 and on May 14, 2015 the RA Government issued Decree No. 511-N on Approving the Procedure for Automated Changes to Relevant Data Recorded in the Register in case of Updating Data on Security Interest in Movable Property, the Lists of Data Subject to Automatic Change and these

Databases and on June 10, 2015 - the Decree No. 633-N on Approving the Procedure for Providing Information and Excerpts from the Register of Security Interests in Movable Property.

11. With a view to contributing to financial sector development, improving transparency and strengthening sustainability, with regard to the creation of the legislative framework enabling consolidated supervision of financial groups the RA Central Bank drafted packages of draft laws introducing the specifics of legal regulation and consolidated supervision of financial groups. The package was approved by the National Assembly on November 12, 2015.

Project Monitoring and Evaluation

The key counterpart for implementation of the DPF series is the Chief of Government Staff. Pursuant to the Prime Minister's Decree No. 901-A of September 17, 2014 the Chief of Staff of the Government of the Republic of Armenia-Minister Davit Harutiunyan was appointed as the coordinator of the Development Policy Operation Project signed between the Government of the Republic of Armenia and the World Bank.

Key monitoring and evaluation indicators of reform results planned under DPFs are regularly collected and analyzed by the Financial and Economic Department of the Office of RA Government.

Hovik Abrahamyan

Prime Minister of the Republic of Armenia



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԶԱՊԵՏ

Երևան - 10, Հանրապետության հրապարակ, Կառավարության տուն 1

«12» 11 2015 թ.

№ 01/23.21/19347-15

Չարգացման քաղաքականությունների նամակ

Հայաստանի Հանրապետություն

Պարոն Զիմ Յոնգ Կիմին

Համաշխարհային Բանկի նախագահ

Վաշինգտոն, ԱՄՆ

Հարգելի պարոն Կիմ

Հայաստանի Հանրապետության անունից թույլ տվեք արտահայտել հարգանքներիս հավաստիքը:

Սույն նամակով ցանկանում եմք ներկայացնել Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացումների և արդի բարեփոխումների սպասվող միտումները:

Կառավարության ծրագիրը: Հայաստանի Հանրապետության կառավարությունն իր ծրագրի իրականացմամբ 2014-2017 թվականների ընթացքում նպատակադրել է զարգացած երկրների համեմատ տնտեսական աճի առաջանցիկ տեմպերի ապահովում՝ համախառն ներքին արդյունքի միջնաժամկետ՝ 5 տոկոս աճի միջոցով, նվազագույն աշխատավարձի աստիճանական բարձրացում՝ մինչև 65.000 դրամ և աղքատության կրճատման ապահովում՝ 10 տոկոսային կետով: Վերոնշյալ թիրախներին հասնելու

նպատակով ՀՀ կառավարությունն իր ծրագրով նախանշել է (ա) իրականացնել տնտեսական աճը խթանող քաղաքականություն և (բ) պահպանել և ուժեղացնել աղքատամետ սոցիալական քաղաքականությունը:

(ա) Տնտեսական աճը խթանող հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների իրականացման համար ՀՀ կառավարության և Կենտրոնական բանկի հնարավորությունները առավել սահմանափակված են համապատասխանաբար պետական պարտքի և գների ու ֆինանսական համակարգի կայունության նպատակադրումներով: Այս պայմաններում տնտեսական աճը խթանող քաղաքականության հիմնական առաջնահերթությունը հանդիսանում է համախառն առաջարկի խթանումը, որի համար կձևավորվի գրավիչ գործարար միջավայր և կընդլայնվեն արտահանման հնարավորությունները: Տնտեսական զարգացման նախադրյալների ձևավորման համար ՀՀ կառավարությունը նախաձեռնել է գործողություններ՝ ուղղված արտահանման վրա հիմնված արդյունաբերական քաղաքականության շարունակականության ապահովմանը:

(բ) Աղքատամետ սոցիալական քաղաքականության շարունակական իրականացումը շատ կարևոր է երկրի համար, քանի որ 2009 թվականի տնտեսական ճգնաժամը բավականին խորացրեց աղքատության մակարդակը: ՀՀ կառավարության կողմից իրականացվող տնտեսական և սոցիալական քաղաքականությունների նպատակն է բնակչության համար ապահովել արժանավայել աշխատանք և բարեկեցություն: Նշված նպատակի իրականացման համար արդարացի վարձատրություն ապահովող աշխատատեղերի ստեղծման շարունակական քաղաքականությունը կլինի գերակայող կառուցվածքային և ոլորտային քաղաքականությունների նպատակներից:

Չնայած համաշխարհային տնտեսությունում գոյություն ունեցող և ի հայտ եկող անորոշություններին, այնուամենայնիվ Կառավարությունը նոր ծրագրով կիրագործի նաև երկարաժամկետ նպատակադրումները և քաղաքականությունները, որոնք հետաձգվել էին ճգնաժամով պայմանավորված բարձր անորոշությունների պատճառով, սակայն չեն կորցրել իրենց արդիականությունը: ՀՀ կառավարությունը զուգահեռաբար ամրապնդելու է դրանց չիրականացնելու հնարավոր ռիսկերի բացահայտման և չեզոքացման կարողությունները՝ երակարաժամկետ նպատակադրումների կատարողականի ապահովման և հնարավոր իրատեսական արդյունք ապահովելու համար: Երկարաժամկետ նպատակադրումներով

շարժվելը ՀՀ կառավարությունը այժմ համարում է հետճգնաժամային իրավիճակում մեր տնտեսության արդյունավետ գործելու ավելի հրատապ հրամայական՝ առաջին պլան մղելով տնտեսական աճի խթանների և հիմքերի ամրապնդումը, ինչի թուլությունը բացահայտեց ճգնաժամը:

ՀՀ կառավարությունը նախաձեռնել և 2014 թվականի մարտի 27-ի իր թիվ 442-Ն որոշմամբ հաստատել է ՀՀ կառավարության **2014-2025 թվականների Հեռանկարային Զարգացման Ռազմավարական Ծրագիրը (ՀՁԾ)**, որը ճգնաժամով պայմանավորված չիրականացած Կայուն Զարգացման Ծրագրի վերանայված տարբերակն է: ՀՁԾ-ում նախանշված են երկրի սոցիալ-տնտեսական զարգացման գերակայությունների ընդհանրական համախումբը, նպատակները, զարգացման հիմնական խոչընդոտները և սահմանափակումները, գերակա նպատակներին հասնելու համար անհրաժեշտ առանցքային բարեփոխումներն ու քաղաքականության գործիքները: Ընդ որում, երկրի զարգացման ներկա փուլի առանձնահատկություններից ելնելով որակյալ և բարձր արտադրողականություն ապահովող աշխատատեղերի ստեղծման ճանապարհով զբաղվածության ընդլայնումը հռչակվել է որպես ծրագրի հիմնական նպատակ: ՀՁԾ-ն հիմնվել է երեք գերակայությունների վրա: Դրանք են.

1) կայուն և արագ տեմպերով տնտեսական աճի ապահովմանն ուղղված տնտեսական քաղաքականություն.

2) բնակչության խոցելի խմբերին (ներառյալ՝ աղքատները) ուղղված ակտիվ սոցիալական և եկամտային քաղաքականություն.

3) երկրի կառավարման համակարգի արդիականացում, ներառյալ՝ պետական կառավարման արդյունավետության բարձրացումը և պետության տրամադրության տակ գտնվող ռեսուրսային փաթեթի առաջանցիկ աճի ապահովումը:

Ի տարբերություն տնտեսական զարգացման նախորդ փուլերի, երբ տնտեսական աճն ապահովվում էր հիմնականում աշխատանքի արտադրողականության աճի հաշվին, ՀՁԾ-ով իրականացվելիք գործողությունների արդյունքում ակնկալվում է, որ 2014 - 2025 թվականներին տնտեսության ոչ գյուղատնտեսական հատվածում տնտեսական աճի

յուրաքանչյուր տոկոսային կետի առնվազն 80 տոկոսը կապահովվի աշխատանքի արտադրողականության, իսկ մնացածը զբաղվածության ընդլայնման հաշվին: Ընդ որում, արդյունաբերությունում, որը կլինի զբաղվածության ընդլայնման առանցքային ոլորտներից մեկը, աճին մասնակցության համապատասխան համամասնությունները կկազմեն 75 և 25 տոկոս: Զբաղվածության ավելացումը դիտարկելով որպես առաջիկա տարիների սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական նպատակ՝ եկամտային քաղաքականության գործողություններն ու միջոցառումները նախագծվելու են՝ առաջնորդվելով այն տրամաբանությամբ, որ աշխատավարձերի աճը չգերազանցի արտադրողականության աճին՝ թույլ չտալով միավոր աշխատուժի արժեքի գործակցի աճ: Միևնույն ժամանակ, կտրուկ կրճատվելու է աշխատող աղքատների թիվը՝ նվազագույն աշխատավարձի աճի քաղաքականության իրականացման ճանապարհով: Վերոնշյալ շարունակական բարեփոխումները իրականացվում են ինչպես «Կառավարության, այնպես էլ դրնոր կազմակերպությունների անգնահատելի աջակցության միջոցով: Համաշխարհային բանկի օժանդակությունը առանցքային նշանակություն ունի տնտեսության վերականգնման և հետագա կայուն աճի համար: Առաջարկվող Զարգացման քաղաքականության նոր գործառնությունն օժանդակելու է կայուն աճի հիմնարարների համար անհրաժեշտ պայմանների ամրապնդմանը, ինչը կայուն մակրոտնտեսական իրավիճակի ստեղծման գրավականն է:

Մակրոտնտեսական իրավիճակը

2015 թվականի հունվար-հունիս ամիսներին նախորդ տարվա նկատմամբ տնտեսական աճը կազմել է 4 տոկոս իսկ հունվար-հուլիսին տնտեսական ակտիվության ցուցանիշը կազմել է 4.2 տոկոսով նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ: Տնտեսական ակտիվության աճին հիմնականում նպաստել են հանքագործական արդյունաբերության և գյուղատնտեսության բարձր աճերը: Առաջին վեց ամիսների տնտեսական աճն ուղեկցվել է ներքին պահանջարկի՝ սպառման և ներդրումների նվազմամբ և զուտ արտահանման բարելավմամբ, որն էլ իր հերթին պայմանավորվել է հիմնականում ապրանքների և ծառայությունների ներմուծման նվազմամբ:

Այնուամենայնիվ, որոշակիորեն պայմանավորված ներքին պահանջարկի աճով (աշխատավարձի աճ), ինչպես նաև հիմնվելով հանքահումքային ապրանքների արտահանման ընդլայնվող հնարավորությունների վրա՝ (պայմանավորված հիմնականում նոր հանքավայրերի շահագործմամբ)՝ կառավարությունը ջանքեր է գործադրելու, որ 2015 թվականի տնտեսական աճի բյուջետային ծրագրով նախատեսված 4.1 տոկոսն իրականանա՝ ապահովելով մակրոտնտեսական հաշվեկշռվածությունը:

Չնայած Կառավարության ձգտումներին՝ 2015 թվականի զարգացումները վկայում են, որ բյուջետային ծրագրով նախատեսվող իրական աճի ցուցանիշի նվազեցման ուղղությամբ ռիսկերը այնուամենայնիվ նյութականացվում են: Դա հիմնականում պայմանավորված է հայրենական ապրանքների նկատմամբ արտաքին պահանջարկի, ներդրումների և դրամական փոխանցումների ներհոսքի նվազման արդյունքում՝ բնակչության տնօրինվող եկամտի իրական նվազմամբ: Արտաքին պահանջարկի նվազումն իր վրա է կրում հիմնականում Ռուսաստանի տնտեսական անկման ազդեցությունը: 2015 թվականի առաջին կիսամյակում, չնայած տրանսֆերտների նվազմանը՝ երկրի վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի էական բարելավում է տեղի ունեցել. հիմնականում ներմուծման նվազմամբ պայմանավորված զուտ արտահանման բարելավման հաշվին: 2015 թվականի յոթ ամիսների արդյունքներով արտահանման թույլ աճ է արձանագրվել, ընդ որում արտահանման աճին հիմնականում նպաստել է հանքահումքային ապրանքների, մանածագործական իրերի, բուսական ծագման արտադրանքի և ծխախոտի արտահանումը:

Տնտեսական վերականգնմանը մեծապես նպաստել է ՀՀ կառավարության կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարություն»-ը: Կառավարությունը ակնկալում է, որ արտահանման առաջանցիկ աճի հաշվին (ներմուծման համեմատ) ընթացիկ հաշվի պակասորդի բարելավումը միջնաժամկետում կշարունակվի: Սակայն, չպետք է անտեսել համաշխարհային զարգացման առկա դժվարությունները, աշխարհաքաղաքական վտանգները և դրանց հետ կապված հնարավոր արտաքին ռիսկերը: Նշված պայմաններում գործընկեր երկրներում՝ հատկապես Ռուսաստանի պահանջարկի կրճատումը, ինչպես նաև միջազգային շուկաներում բորսային ապրանքների

գների անկայունությունը կարող են բացասաբար ազդել Հայաստանի տնտեսության վրա՝ նվազեցնելով արտահանման աճի տեմպերը:

Այնուամենայնիվ, արձանագրված արդյունքները վկայում են, որ տարվա ընթացքում իրականացված մակրոտնտեսական քաղաքականությունը եղել է խելամիտ՝ արտաքին շուկերի կլանման և մակրոտնտեսական կայունության ապահովման գործում: Հարկաբյուջետային քաղաքականության մոտեցումը եղել է ուժեղ խթանող և միաժամանակ հավասարակշռված: Ընդ որում, նպատակ է դրվել չափավոր նպաստել տնտեսության վերականգնմանը, որի պայմաններում չի խաթարվի մակրոտնտեսական և պարտքի կայունությունը. տարվա առաջին կիսամյակի արդյունքներով հարկաբյուջետային քաղաքականությունը ամբողջական պահանջարկի վրա թողել է ընդհանուր առմամբ խթանող ազդեցություն:

2015 թվականի երկրորդ եռամսյակում գնաճային զարգացումներն ընթացել են գնահատված վարքագծին համահունչ, 12-ամսյա գնաճը կազմել է 5.5%՝ գտնվելով թույլատրելի վերին սահմանի վրա: 2015 թվականի տարեվերջի համար գնահատվում է, որ 12-ամսյա գնաճը կնվազի և կգտնվի թույլատրելի միջակայքում: Միջնաժամկետ հորիզոնում կանխատեսվում է, որ գնաճը կլինի նպատակային թիրախի 4% (+/-1.5) տոկոս միջակայքում: Հարկ է նշել, որ դեռևս պահպանվում են արտաքին և ներքին տնտեսությունից եկող ռիսկերը, որոնց դրսևորման պայմաններում հնարավոր է գնաճի ընդլայնում և ԿԲ կողմից դրամավարկային քաղաքականության պայմանների համապատասխան արձագանք՝ գնաճի թիրախի իրագործման համար:

Մակրոտնտեսական և հարկաբյուջետային շրջանակը

2016 թվականի ՀՀ պետական բյուջեի նախագծով Հայաստանի տնտեսության աճը կանխատեսվում է 2.2 տոկոս, սակայն ՀՀ կառավարությունը առաջիկա երեք տարիներին ձգտելու է այն կայունացնել 3-4 տոկոսի շրջանակներում, ինչը հիմնականում կպայմանավորվի գյուղատնտեսության և ծառայությունների աճերով, ինչպես նաև կզուգորդվի համաշխարհային տնտեսական զարգացումներով, այդ թվում՝ նաև ԵՄ տնտեսական աճի տեմպերի արագացմամբ և Ռուսաստանի տնտեսական աճի տեմպերի վերականգնմամբ:

« Կառավարությունը պարտքի կայունության խնդրին մեծ ուշադրություն է դարձնում: Միջազգային պրակտիկայում կիրառվող մոդելներով կատարված հարկաբյուջետային կայունության վերլուծության արդյունքներով « պարտքի կայունությունը բնութագրող ցուցանիշները կայունության մակարդակում են գտնվում: Զգայունության ցուցանիշներում, հարկաբյուջետային կայունությունը առավել զգայուն է ՀՆԱ-ի կայուն ցածր աճի ցուցանիշների նկատմամբ: Իսկ արտաքին պարտքի կայունության ցուցանիշների մասով չափավոր ռիսկեր են նկատվում փոխարժեքի միաժամանակյա 20%-անոց անվանական արժեզրկման և արտահանման ծավալների կրճատման սցենարի պարագայում:

Համաշխարհային տնտեսության և Հայաստանում արձանագրվող դեռևս դանադաղ տնտեսական աճի միջավայրում 2015թ-ին իրականացվում է հարկաբյուջետային ավելի ընդլայնող քաղաքականություն՝ տնտեսական աճը հնարավորինս խթանելու համար: Արդյունքում, իրականացվում է 2015թ. պետական բյուջեով նախատեսված ֆինանսավորումից ավելի ֆինանսավորում, ինչը ենթադրում է պետական բյուջեի դեֆիցիտի ընդլայնում և զուգահեռաբար Կառավարության պարտքի մակարդակի մեծացում, միաժամանակ պահպանելով պարտքի և մակրոտնտեսական կայունության կանոնները:

« Կառավարության պարտքի կառավարման 2016-2018 թվականների ռազմավարական ծրագրի համաձայն՝ պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը չի գերազանցի «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքով նախատեսված շեմը: Արտաքին պարտքի կառավարմանը ճկունություն հաղորդելու և արտաքին կապիտալի շուկան Հայաստանի տնտեսության մասնավոր հատվածի համար հասանելի դարձնելու նպատակով Կառավարությունը կարևորում է արտարժույթով պարտատոմսերի տեղաբաշխումը՝ ուշադրության կենտրոնում պահելով պարտքի միջնաժամկետ կայունությունը: Այդ շրջանակներում 2015թ. մարտի 26-ին թողարկվեցին 10 տարի մարման ժամկետով 500 մլն դոլար ծավալով եվրապարտատոմսեր՝ 7.15% արժեկտրոնային եկամտաբերությամբ և արժեկտրոնների վճարման կիսամյակային պարբերականությամբ: Միևնույն ժամանակ, իրականացվեց 2013թ. սեպտեմբերի 30-ի թողարկման 7 տարի մարման ժամկետով 700 մլն դոլար ծավալով եվրապարտատոմսերի 200 մլն դոլար ծավալի հետգնում:

Այս պայմաններում հարկաբյուջետային կայունության ապահովման համար կարևորվում է բարձր տնտեսական աճի ապահովումը և հարկային ու մաքսային քաղաքականության և վարչարարության բարեփոխումների արագացման անհրաժեշտությունը:

Հարկային եկամուտների բարելավման ապահովման մասով շարունակաբար իրականացվում են մի շարք միջոցառումներ: 2015 թվականի ընթացքում իրականացված միջոցառումներից կարևորվում են հետևյալները.

1. 2015 թվականի հուլիսի 1-ին ուժ մեջ է մտել ՀՀ կառավարության կողմից մշակված օրենսդրական նախագծերի փաթեթը, որի հիմնական նպատակներից մեկը հարկ վճարողների (հատկապես խոշոր հարկ վճարողների) կողմից ապրանքների իրացման գործարքների փաստաթղթավորման մակարդակի բարելավումն է, ինչը հնարավորություն կընձեռի բարձրացնել ստվերային շրջանառությունների դեմ պայքարի արդյունավետությունը և ապահովել պետական բյուջեի լրացուցիչ հարկային եկամուտներ:

Բացի այդ, ստվերային շրջանառությունների բացահայտման ուղղությամբ հարկային մարմնի կողմից իրականացվող միջոցառումների արդյունքում շարունակաբար ավելանում է էլեկտրոնային եղանակով դուրս գրվող հարկային հաշիվների քանակը:

2. Նախագծվել են տրանսֆերային գնագոյացման հիմնական մոտեցումները, կարգավորման շրջանակը և մեթոդները, որոնց վրա հիմնվում է տրանսֆերային գնագոյացումը: Տրանսֆերային գնագոյացման կանոնների կիրառության հետ կապված հարաբերությունները նախատեսվում է սահմանել ներկայումս մշակվող հարկային օրենսգրքի շրջանակներում: Առաջարկվող վարչարարական գործիքակազմի միջոցով նախատեսվում է բարձրացնել հատկապես խոշոր հարկ վճարողների նկատմամբ կիրառվող հարկային վարչարարության արդյունավետությունը, որն ուղղված կլինի պետական բյուջե վճարվող հարկային եկամուտների ավելացմանը: 2015 թվականից բարձրացվել են ոչ մետաղական օգտակար հանածոների բնօգտագործման վճարների դրույքաչափերը:

Միաժամանակ, ՀՀ կառավարության կողմից շարունակվում են աշխատանքները գործարար միջավայրի բարելավման ուղղությամբ, ինչը հնարավորություն կընձեռի բարձրացնել երկրում տնտեսական ակտիվության մակարդակը:

Գործարար միջավայրի շարունակական բարելավման քաղաքականության շրջանակներում հարկային համակարգում ընթացող բարեփոխումներին մասնավոր հատվածի և ոլորտի մասնագիտական-հասարակական կազմակերպությունների ներգրավվածությունը ապահովելու, ինչպես նաև հարկային մարմնի և տնտեսավարող սուբյեկտների ներկայացուցիչների միջև կառուցողական երկխոսության հարթակ ձևավորելու նպատակով ՀՀ ֆինանսների նախարարի հրամանով ստեղծվել է հարկային խորհուրդ, որի կազմում ներառվել են նաև գործարար շրջանակների շահերը ներկայացնող մի շարք մասնագիտական հասարակական կազմակերպությունների ու միությունների ներկայացուցիչներ: Հարկային խորհուրդը արդեն իսկ գումարել է իր առաջին նիստը, որի ընթացքում քննարկվել են գործարար միջավայրի բարելավման և հարկային օրենսդրության կատարելագործմանն ուղղված մի շարք առաջարկներ:

Գործարար միջավայրի շարունակական բարելավման քաղաքականության շրջանակներում իրականացվել են նաև հետևյալ աշխատանքները.

- ԱԱՀ վճարող համարվող տնտեսավարող սուբյեկտների շրջանառու միջոցների համալրմանն ու արդյունավետ օգտագործմանը նպաստելու նպատակով վերանայվել է ԱԱՀ-ի գծով հաշվանցումներ կատարելու համակարգը և 2015թ. սկսած՝ աստիճանական անցում է կատարվում ԱԱՀ-ի գծով հաշվանցումների կատարման հաշվեգրման մեթոդին,
- 2015թ. ամբողջությամբ անցում է կատարվել հարկային հաշիվների, իսկ 2016թ. ամբողջությամբ անցում է կատարվելու այլ հաշվարկային փաստաթղթերի դուրս գրման էլեկտրոնային համակարգին,
- տնտեսության ներդրումային ակտիվությունը բարձրացնելու նպատակով՝ 2015 թվականի հունվարի 1-ից սահմանվել է, որ ՀՀ կառավարության որոշմամբ ընտրված կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներդրումային ծրագրերի շրջանակներում ներմուծվող ապրանքների նկատմամբ ՀՀ մաքսային սահմանին ԱԱՀ-ի գումարների վճարման ժամկետները հետաձգվում են անկախ ներմուծվող ապրանքների մաքսային արժեքի մեծությունից:

Բացի այդ, հարկային օրենսդրությունը պարզեցնելու, հստակեցնելու, համախմբելու, ինչպես նաև հարկային համակարգի կայունությունն ու կանխատեսելիությունը ապահովելու նպատակով ՀՀ ֆինանսների նախարարի հրամանով ստեղծվել է հարկային օրենսգրքի

նախագծի մշակման աշխատանքային խումբ, որը մշակել է հարկային օրենսգրքի նախագիծը, ինչը ս.թ. հոկտեմբերի 8-ին հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից և դրվել լայն քննարկման (2ԲԳ-3 նախապայման): Մի քանի ամիս տևող քննարկումներից հետո 2016թ մարտին լրամշակված փաթեթը Կառավարությունը կուղարկի Ազգային ժողով: Կառավարությունը հոչակել է օրենսգրքի հիմքում դրվող սկզբունքները՝ եկամուտների ավելացում, հարկային արտոնությունների հնարավորինս փոխարինում սուբսիդիաներով, արտադրության խթանում՝ սպառման հարկման վրա ավելի մեծ բեռ դնելով և այլն: Կառավարությունը հանձն է առել այդ ընթացքում մանրամասնորեն քննարկել իր բոլոր գործընկերների (մասնավորապես, Համաշխարհային բանկի, Արժույթի Միջազգային հիմնադրամի և ՀՀ գործարարների միավորումների) կողմից արդեն իսկ պաշտոնապես բարձրացված և բարձրացվող հարցերը և հոչակված սկզբունքների շրջանակներում լուծումներ գտնել և Ազգային ժողով ներկայացնել համալիր քննարկված փաստաթուղթ:

Սոցիալական ռիսկերի կառավարում և մարդկային կապիտալի զարգացում

Առաջիկա տարիներին Կառավարության՝ սոցիալական ռիսկերի մեղմման քաղաքականության գերակայությունն է ապահովել նախանշված առանցքային սոցիալական տրանսֆերտները և ներդրումները, սակայն մենք զգուշությամբ կկառավարենք հատկացումները՝ հաշվի առնելով բյուջետային լարվածությունը: Միաժամանակ, հաշվի առնելով ճգնաժամի պայմաններում սոցիալական խոցելիության հնարավոր մեծացումը, ինչպես նաև 2013 թվականի աղքատության մակարդակը, որը կազմել է 32.0 տոկոս՝ մենք նախատեսում ենք նախ սոցիալական տրանսֆերտների հասցեականության և մեր ծրագրերի ընդհանուր արդյունավետության բարձրացման միջոցով հնարավորինս ընդլայնել կարիքավոր շահառուների թիվը:

ՀՀ Ազգային ժողովի կողմից 2014 թ. դեկտեմբերի 17-ին ընդունվել է «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքը, որն ուժի մեջ է մտել 2015 թ. հունվարի 1-ից, որը ձևավորում է ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման համակարգի իրավական հենքը: 2015 թվականի ընթացքում մշակվել և ընդունվել են նշված օրենքի կիրարկումն ապահովող հիմնական իրավական ակտերը:

Շարունակվում են կենսաթոշակային ապահովության ոլորտի տեղեկատվական ենթակառուցվածքները կատարելագործելու ուղղությամբ կատարվող աշխատանքները: Մասնավորապես, ներկայումս ինքնաշխատ եղանակով կիրառվում է բնակչության պետական ռեգիստրում առկա կենսաթոշակային ոլորտին անհրաժեշտ տեղեկատվությունը: Սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (ՍԷԿՏ) համակարգի տվյալները ստացվում են և արդեն ավարտական փուլում են ստացված տեղեկատվությունը «Էլեկտրոնային կենսաթոշակ» համակարգում կիրառելու համար տարվող աշխատանքները:

Ընթացքի մեջ են անձնավորված հաշվառումը և սոցիալական վճարներ կատարելը ճշտելու համար եկամտային հարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման համակարգից էլեկտրոնային եղանակով ստացվող տվյալներով ենթահամակարգերի հիման վրա աշխատանքային ստաժը հաշվարկելու մոդուլի ներդրման աշխատանքները:

«Կառավարությունը բարձրացնում է ընտանեկան նպաստի ծրագրի ծածկույթը, մինչև ժամանակ բարելավելով դրա թիրախավորումը: Սոցիալական աջակցության ոլորտի բաղկացուցիչներից մեկի ու աղքատության կրճատման կարևոր գործոնի նկատմամբ մեր գերակայությունը նպաստների համակարգին ուղղվող պետական միջոցների աճն է, ինչպես նաև միջոցների առավել հասցեական ու արդյունավետ օգտագործումը՝ բնակչության աղքատ խավերի կենսամակարդակի բարձրացման և երկրում աղքատության ու անհավասարության մեղմման նպատակով: 2015 թվականին փոփոխության ենթարկված պետական բյուջեում ընտանեկան նպաստի ծրագրի և հրատապ դրամական օգնության ծրագրի գծով հատկացումների մակարդակը մնացել է անփոփոխ:

Մինչև 2015թ. վերջը կավարտվեն չաշխատող կանանց մայրության նպաստի և մինչև երկու տարեկան խնամքի նպաստի նշանակման գործընթացների ծրագրային ապահովման ուղղությամբ կատարվող աշխատանքները:

Պետական մարմիններում, ինչպես նաև կրթության, մշակույթի, սոցիալական պաշտպանության ոլորտների կազմակերպություններում աշխատակիցների և նրանց անմիջական ընտանիքի անդամների առողջական, կրթական և այլ խնդիրների ապահովման նպատակով սոցիալական փաթեթը 2014-2016թթ ժամանակահատվածում նախատեսվում է տարեկան ավելի քան 20.2 մլրդ դրամ:

Առողջապահություն

Կառավարությունը նախատեսում է ավելացնել առողջապահության ոլորտի ֆինանսավորումը, սակայն միմիայն արդյունավետության բարելավման միջոցառումների զուգահեռ ներդրմամբ: Կառավարությունն ավարտել է համավճարների ռազմավարական մոտեցման նախապատրաստումը, որի նպատակն էր ավելացնել հիվանդանոցային ծառայությունների համար փոխհատուցումը, ներդնել (կամ հաճախ պաշտոնական դարձնել) համավճարները և ապահովել «գրպանից կատարվող» ընդհանուր ծախսերի ավելի ցածր մակարդակ՝ ամենաաղքատ տնային տնտեսությունների համար:

«Կառավարությունը ջանքեր կգործադրի մեղմելու առողջապահության ոլորտում համավճարի քաղաքականության հնարավոր ազդեցությունն աղքատների վրա՝ հաշվի առնելով այն փաստը, որ նրանց ծածկույթը դեռևս բավարար չէ: Այս առնչությամբ, քննարկվել են հնարավոր մեխանիզմներն այն բարելավելու նպատակով, ներառյալ՝ տվյալ ծրագրի համար համապատասխանելիության միավորը ընտանեկան նպաստի ծրագրի գնահատականի միավորին հավասարեցնելու հարցը: Բյուջետային գործընթացի շրջանակներում՝ 2014 թվականին պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք ունեցող բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի ցանկում ընդգրկված՝ աղքատության ընտանեկան նպաստի համակարգում հաշվառված նպաստառուների անապահովության միավորը 36-00-ից 30-00 միավորի իջեցնելու հետ կապված ծախսերի աճը կկազմի 2,870.5 մլն դրամ, իսկ Իմունականխարգելման ազգային ծրագրի գծով գնվող պատվաստանյութերի գների և քանակի ավելացման հետ կապված՝ 256.2 մլն դրամ:

«Կառավարությունը հետևողական է առողջապահության ոլորտի բժշկական հաստատությունների շարունակական արդիականացման գործընթացներին՝ ինչպես Երևան քաղաքում, այնպես էլ Հայաստանի Հանրապետության մարզերում: Մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրով նախատեսված է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պրոֆ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոնի արդիականացումը, ինչպես նաև ոսկրածուծի փոխպատվաստման ծառայությունների ստեղծումը: Շարունակվում է նաև մարզային բժշկական հաստատությունների (առողջության պահպանման առաջնային օղակի և

հիվանդանոցային) վերանորոգման, վերակառուցման և վերագինման ծրագրի իրականացումը՝ հասանելի դարձնելով ժամանակակից բժշկական ծառայությունները հանրապետության ամբողջ տարածքում:

Կառավարության կողմից լրացուցիչ քայլեր կձեռնարկվի նաև բնակչության սոցիալապես անապահով խմբերում ընդգրկված անձանց համար պետական պատվերի գների աստիճանական վերանայման համար:

Կառավարությունը շարունակելու է ոլորտում իրականացվող բարեփոխումները՝ նպատակ հետապնդելով բարելավել բնակչության առողջական վիճակի բնութագրիչները՝ առողջապահական ծառայությունների մատչելիության, հասանելիության և որակի բարձրացման ճանապարհով:

Գործարար միջավայրի բարելավում

«Կառավարության կողմից բարձր գործարար ակտիվության և կայուն ներդրումային հոսքեր ներգրավելու համար նպաստավոր միջավայրի ձևավորումը դիտվում է որպես երկրում տնտեսական առաջընթացի գրավականներից մեկը: Այս ուղղությամբ Կառավարությունը քաղաքականության համապարփակ օրակարգ ունի, որոնք որոշ մասով ներառված են նաև նոր ԶԲԳ փաթեթում: Վերջինս նաև կիրառում ենք որպես գործարար բարեփոխումների ուղղությամբ որոշ նախաձեռնությունների կիրարկման կամ մոնիտորինգի շրջանակ:

Գործարար միջավայրի բարելավման ներկա ուղղություններն ընդգրկում են ներդրումների ներգրավման և գործարարությամբ զբաղվելու տեսակետից վարչարարական խոչընդոտները նվազագույնի հասցնելը, գործարար միջավայրի վրա կարգավորման ազդեցությունների գնահատման համակարգի շարունակ կատարելագործումը, պետություն-մասնավոր հատված արդյունավետ երկխոսության ապահովման և գործարար խոչընդոտների բացահայտման նպատակով հետադարձ կապի ինստիտուտի կայացումը, գործունեության որոշակի տեսակներով զբաղվելու համար նախատեսված թույլտվությունների և լիցենզիաների ցանկի էական կրճատումը:

Գործարար միջավայրի բարելավման ուղղությամբ կառավարության շարունակական գործողությունների դրական արդյունքներն արձանագրվում են նաև Համաշխարհային

բանկի կողմից հրապարակվող «Գործարարությամբ զբաղվելը» վարկանիշային զեկույցներում՝ արտահայտվելով երկրի զբաղեցրած դիրքի առաջընթացով: «Գործարարությամբ զբաղվելը 2016» զեկույցի տվյալներով՝ Հայաստանը 189 երկրների շարքում զբաղեցնում է 35-րդ տեղը: Զեկույցի տվյալներով Հայաստանի գործարար միջավայրը լավագույնն է ԱՊՀ երկրների շարքում և երկրորդն է տարածաշրջանում՝ զիջելով միայն Վրաստանին:

Վարկավորման հասանելիություն

ՀՀ կառավարությունը կարևորում է վարկերի հասանելիությունը մասնավորապես փոքր և միջին ձեռնարկությունների (ՓՄՁ) համար:

ՀՀ կառավարությունը շարունակում է ՀՀ ԿԲ-ի հետ համատեղ միջոցառումներ ձեռնարկել, որպեսզի լուծի ՓՄՁ ներկայիս խնդիրները՝ կապված բանկերից վարկ ստանալու համար գրավի տրամադրման հետ՝ բարելավելով նորմերը և կանոններն, ինչպես նաև ենթակառուցվածքները շարժական գրավի կիրառման գրանցման և ընդարձակման համար, ներառյալ շարժական գույքի նկատմամբ իրավունքների գրանցման առցանց ռեգիստրի օգտագործումը: Այդ կապակցությամբ ընդունվել է «Շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցման մասին» ՀՀ օրենքը, և վերջինիս ընդունմամբ պայմանավորված փոփոխություններ և լրացումներ են կատարվել նաև մեկ տասնյակ այլ օրենքներում, որոնք ուժի մեջ են մտել սույն թվականի հոկտեմբերի 1-ից (ՁԲԳ-3 նախապայման): Շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցման համակարգի արդյունավետ գործակցությունն ապահովելու համար Հայաստանի Հանրապետության կառավարությունն ընդունել է վերը նշված օրենքների կատարումն ապահովող անհրաժեշտ ենթաօրենսդրական ակտեր, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կազմում ստեղծվել է Շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցման գործակալությունը: Ստեղծվել և սույն թվականի հոկտեմբերի 1-ից գործում է նաև շարժական և անշարժ գրավի ինտերնետով հասանելի էլեկտրոնային ռեգիստրը: Առցանց ռեգիստրի գործարկմամբ կապահովվի այդ գործարքների մասին հանրային իրազեկումը և տվյալ գործարքների առարկա հանդիսացող գույքի նկատմամբ նախապատվության իրավունքի գրանցումը,

բացի այդ ռեգիստրի հանրային հասանելիությունը հնարավորություն կտա շահագրգիռ անձանց, առանց լրացուցիչ ծախսերի և ջանքերի, տեղեկանալու շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքի գրանցումներին, ինչն էլ իր հերթին կբարձրացնի տվյալ տեսակի գործարքների ապահովությունը և կնվազեցնի դրանց հետ կապված ռիսկերը:

Շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցման համակարգը կատարելագործելու համար ՀՀ կառավարությունը ցանկություն է հայտնում շարունակելու համագործակցությունը Համաշխարհային բանկի հետ:

Կառավարությունը նախատեսում է նաև փոփոխություն իրականացնել անվճարունակության մասին օրենսդրությունում (ՁԲԳ-4 նախապայման), որով նախատեսվում է արտադատարանային արբիտրաժի, կորպորատիվ վերակազմավորման, պարտքի վերաձևակերպման, ինչպես նաև ձեռնարկությունների վերաֆինանսավորման հնարավորությունը: Այժմ աշխատանքներ են տարվում նախագծի լրամշակման համար:

Ֆինանսական ոլորտի բարելավում

Ֆինանսական ոլորտի զարգացմանը նպաստելու, թափանցիկությունը բարելավելու և կայունությունն ամրապնդելու նպատակով Կառավարությունն իրականացնում է համապատասխան աշխատանքներ՝ կապված ֆինանսական խմբերի համախմբված վերահսկողության իրականացման համար օրենսդրական դաշտի ձևավորման հետ (ՁԲԳ-3 նախապայման): Այս նպատակով ՀՀ կենտրոնական բանկի կողմից մշակվել են ««Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», ««Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», ««Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», ««Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», ««Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը (այսուհետ՝ Նախագծերի փաթեթ), որով ներդրվել է ֆինանսական խմբերի

իրավական կարգավորման և դրանց համախմբված վերահսկողության առանձնահատկությունները: Նախագծերի փաթեթը 2015 թվականի օգոստոսին հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել է ՀՀ Ազգային ժողով: Նախագծերի փաթեթն ընդգրկված է Ազգային ժողովի օրակարգում, և փաթեթի վերաբերյալ Համաշխարհային բանկի աջակցությամբ միջազգային խորհրդատվության հոկտեմբերին ստանալուց և լրամշակելուց հետո, այն անմիջապես կքննարկվի 2015թ նոյեմբերի 10-ին մեկնարկող արտահերթ նստաշրջանում:

Ավիացիայի ոլորտի բարելավում

Բարեփոխումների շրջանակներում տարանջատվել են քաղաքականության և տնտեսական կարգավորման, տեխնիկական կարգավորման և թռիչքային ու ավիացիոն անվտանգության, պատահարների և լուրջ միջադեպերի քննության համար պատասխանատու լիազոր մարմինները: Արդիականացվել է ավիաընկերությունների հավաստագրման գործընթացը, որի նպատակով 2015 թվականի ապրիլին ուժի մեջ են մտել օդանավ շահագործողի վկայականի, ավիափոխադրողի մասնագրի, ինչպես նաև տեղական և օտարերկրյա օդանավ շահագործողներին օդային ուղիների շահագործման թույլտվությունների տրամադրման գործընթացները կարգավորող համապատասխան գերատեսչական հրամանները:

Արդիականացման գործընթացի իրավական հիմքի ամբողջական ապահովմանն ուղղված՝ ՀՀ ազգային ժողովի կողմից ընդունվել և 2015 թվականի օգոստոսի 1-ից ուժի մեջ է մտել ««Ավիացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը: ՀՀ կառավարության կողմից 2015 թվականի օգոստոսի 6-ին ընդունվել են վերոնշյալ օրենքի նորմերի պատշաճ կիրարկումն ապահովող համապատասխան ենթաօրենսդրական ակտերը (ՁԲԳ-3 նախապայման):

Բաց երկնքի քաղաքականության հոչակումից հետո աշխատանքներ են տարվել Հայաստանի Հանրապետությունում ավիացիայի ոլորտում կատարվող փոփոխությունների և նոր հնարավորությունների վերաբերյալ գործընկեր պետություններին և բոլոր շահագրգիռ կողմերին իրազեկման ուղղությամբ: Բանակցություններ են տարվել թվով 26 գործընկեր

պետությունների ավիացիոն իշխանությունների հետ օդային հաղորդակցությունների մասին համաձայնագրերի վերանայման ուղղությամբ: Նախնական բանակցություններ են սկսվել նաև ԵՄ ընդհանուր ավիացիոն գոտուն Հայաստանի Հանրապետության միանալու ուղղությամբ, ինչը հնարավորություն կտա ազատականացնել օդային հաղորդակցությունների ոլորտը ԵՄ անդամ պետությունների հետ: Մի շարք պետությունների հետ հաջողվել է ազատականացնել օդային հաղորդակցությունների ոլորտը՝ ներառյալ օդի 5-րդ ազատության իրավունքի տրամադրումը և ավիաընկերությունների առևտրային գործունեությանը վերաբերող սահմանափակումների վերացումը՝ բոլոր դեպքերում պահպանելով փոխադարձության սկզբունքը:

Մի շարք միջազգային համաժողովների մասնակցության և աշխատանքային քննարկումների շրջանակներում շարունակական աշխատանքներ են տարվում հայկական ավիացիոն շուկան նոր ավիաընկերություններով համայնելու, ինչպես նաև հայկական շուկան սպասարկող ավիաընկերությունների կողմից շաբաթական հաճախականությունների ավելացման ուղղությամբ: Ավելի քան 30 ավիաընկերությունների հետ բանակցությունների արդյունքում որոշ ավիաընկերություններ մուտք են գործել հայկական շուկա, մի շարք ավիաընկերություններ հետաքրքրվել են դեպի Հայաստան երթուղիների սպասարկմամբ և իրականացնում են շուկայի ուսումնասիրության աշխատանքներ:

Հարկային և մաքսային բարեփոխումներ

Գործարար միջավայրի շարունակական բարելավման քաղաքականության ներքո կատարվել են հետևյալ հիմնական աշխատանքները: Մասնավորապես,

- 1) ընդլայնվել է էլեկտրոնային եղանակով հաշվետվություններ ներկայացնող ու հարկային հաշիվներ դուրս գրող հարկ վճարողների շրջանակը,
- 2) հարկ վճարողներին հնարավորություն է ընձեռվել հարկերը վճարել էլեկտրոնային եղանակով, ինչպես նաև իրականացվել են հարկերի էլեկտրոնային եղանակով վճարման համակարգի առավելությունների վերաբերյալ զանգվածային իրազեկման մի շարք միջոցառումներ,
- 3) հարկ վճարողների և հարկային տեսուչների շփումը կրճատելու և հարկ վճարողի պարտավորությունների մասին հարկային մարմնի կողմից տեղեկատվության

տրամադրումը ավտոմատացնելու նպատակով մշակվել և առաջիկայում ՀՀ կառավարության կողմից կհաստատվի համապատասխան օրենսդրական նախագծերի փաթեթը: Նշյալ փաթեթով նախատեսվում է նաև հարկ վճարողներին հնարավորություն ընձեռել առկա գերավճարների հաշվին իրենց պարտավորությունների դիմաց հաշվանցման և գերավճարի վերադարձի համար դիմումը, ինչպես նաև գերավճարների մասին տեղեկատվություն ստանալու վերաբերյալ հարցումը հարկային մարմին ներկայացնել էլեկտրոնային եղանակով:

4) հարկային օրենսդրության վերաբերյալ հարկ վճարողների իրազեկվածության մակարդակը բարձրացնելու, ինչպես նաև հարկային և մաքսային մարմինների կողմից մատուցվող ծառայությունները առավել հասանելի դարձնելու նպատակով իրականացվել են հարկ վճարողների անվճար ուսուցման դասընթացներ, ինչպես նաև ընդլայնվել է «Հայփոստ» ՓԲԸ-ի փոստային բաժանմունքներում հարկ վճարողների սպասարկման կետերի ցանցը:

5) 2014 թվականի մայիսի 20-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-46-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2014թ հուլիսի 5-ից)՝

ա) արտաքին տնտեսական գործունեություն իրականացնող բարեխիղճ հարկ վճարողների համար ներդրվել է լիազորված տնտեսական օպերատորների ինստիտուտը (ՁԲԳ-3 նախապայման) և սահմանվել է, որ լիազորված տնտեսական օպերատորի կարգավիճակ ստացած տնտեսավարող սուբյեկտները օգտվում են մաքսային պարզեցված ընթացակարգերից ու մաքսային վճարների կատարման ճկուն մեխանիզմներից,

բ) նախատեսվել է մաքսային մարմինների կողմից նախնական որոշման տրամադրման ընթացակարգ և սահմանվել է, որ նշյալ որոշումը կարող է օգտագործվել արտահանման կամ ներմուծման ժամանակ վճարման ենթակա վճարների որոշման և մաքսային ձևակերպումների նպատակներով պահանջվող ոչ սակագնային կարգավորման միջոցների որոշման համար: Նշյալ ընթացակարգերի սահմանման նպատակը մաքսային մարմինների կողմից տրամադրված պարտադիր տեղեկատվության կիրառման միջոցով

ներմուծվող կամ արտահանվող ապրանքների հայտարարագրման ժամանակ անճշտությունների և թերացումների թիվը նվազագույնի հասցնելն է,

Բիզնեսի ստուգումներին ուղղված բարեփոխումներ

Նշված բարեփոխումները, որպես գործարար համայնքի շրջանում պետության նկատմամբ վստահության ամրապնդման կարևոր երաշխիք, ներդրումային և գործարար միջավայրի հետագա բարելավման նպատակով տնտեսաիրավական նոր հարաբերությունների կառուցման տրամաբանության մեջ են: Այս ուղղությամբ ՀՀ կառավարությունը քայլեր է նախաձեռնել՝ 2009 թվականից ընդունելով տեսչական բարեփոխումների հայեցակարգը: Հայեցակարգում ամրագրված դրույթների իրականացման նպատակով համապատասխան օրենսդրական փոփոխություններ կատարվեցին: Ռիսկի գնահատման վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունների կիրառումը և ստուգաթերթերի առկայությունը ստուգում իրականացնող մարմինների համար դարձել է պարտադիր պահանջ:

Բարեփոխումների տրամաբանական շարունակականությունն ապահովելու, վարչական կոռուպցիայի նվազեցման, տեսչական գործընթացում գործառույթների կրկնորդումների վերացման, ինչպես նաև ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործման նպատակով Կառավարությունը ձեռնամուխ է եղել տեսչական համակարգի օպտիմալացման ծրագրի իրականացմանը:

Ոլորտում երրորդ սերնդի բարեփոխումների հիմքերը դրվեցին 2014 թվականին «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի և «Տեսչական համակարգի օպտիմալացման հայեցակարգի և գործողությունների համառոտ ծրագրի» ընդունման արդյունքում (երկուսն էլ ներառված են եղել ԶԲԳ 2-ի շրջանակներում):

Երրորդ սերնդի բարեփոխումների իրականացումը նոր օրենքին և ռազմավարությանը համահունչ նախատեսում է տեսչական մարմինների արդիական և արդյունավետ համակարգ՝ կարգավորելով տեսչական մարմինների իրավական վիճակը, դրանց ստեղծումը (միացումների արդյունքում կամ առանց դրանց կախված կոնկրետ դեպքերից), կառավարումը, գործունեության կազմակերպման սկզբունքները ու առանձնահատկությունները, ինչպես նաև տեսչական մարմինների համար տվյալների

փոխանակման միասնական տեղեկատվական համակարգի ստեղծումը: Նոր օրենքի և հայեցակարգի պահանջների համահունչ նշված փոփոխություններն իրականացնելու համար ՁԲԳ 3-ի հենանիշներով նախատեսվում է մեկ տեսչական մարմնի ստեղծում, որը կհանդիսանա «բարեփոխումների իրականացման ապացույցը» և թույլ կտա գործնական լուծումները կիրառել այլ տեսչություններում: ՁԲԳ 3-ի նախապայման է հանդիսանում ՀՀ էկոնոմիկայի նախարարության Շուկայի վերահսկողության տեսչության վերակազմավորումը՝ հաշվի առնելով մասնավոր հատվածի, ներքին և արտաքին առևտրի, տեխնոլոգիաների կիրառման և այլ հարցերում այդ տեսչության առավել կարևոր դերը: Ներկայում իրականացվում են Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ստեղծման աշխատանքները, որի համապատասխան իրավական փաթեթը հավանության է արժանացել ՀՀ վարչապետին կից տեսչական բարեփոխումների համակարգման խորհրդի ս.թ. սեպտեմբերի 2-ին կայացած նիստում: Զուգահեռաբար նախապատրաստական աշխատանքներ են տարվում ևս երկու տեսչական մարմինների ստեղծման ուղղությամբ (Առողջապահական պետական տեսչություն և ՀՀ ֆինանսների նախարարության երկու տեսչություններ), որոնք ընդգրկված են ՁԲԳ 4-ում: ՁԲԳ 3-ի գործողություններով նախատեսված է կառավարության համապատասխան որոշման ընդունում՝ տվյալների փոխանակման միասնական տեղեկատվական համակարգի ստեղծման վերաբերյալ, որն արդեն իսկ հաստատվել է ՀՀ կառավարության 2015 թվականի հունիսի 18-ի թիվ 678-Ն որոշմամբ:

Հանրային կառավարման բարելավում

Պետության կողմից ծառայությունների արագ ու անվտանգ մատուցման և պետական մարմինների հետ փոխգործակցության թափանցիկության ապահովման համար կառավարությունը կարևորում է էլեկտրոնային թվային ստորագրության լայն կիրառումը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ծառայությունների էլեկտրոնային մատուցման ժամանակ: Այդ նպատակով անհրաժեշտություն է առաջացել ՀՀ օրենսդրական դաշտում կարգավորել ՀՀ պետական մարմինների կողմից ծառայությունների էլեկտրոնային ձևով մատուցման և այդ ընթացքում էլեկտրոնային թվային ստորագրության կիրառման համար անհրաժեշտ տեխնիկական համակարգերի

միասնականարության, անվտանգության և փոխգործակցման ապահովումը: Բացի այդ, էլեկտրոնային ծառայությունների մատուցման համակարգի տեխնիկական ապահովման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է ստեղծել էլեկտրոնային համակարգի կառավարման և սպասարկման միասնական կենտրոն, որը կապահովի էլեկտրոնային համակարգի տեխնիկական սպասարկումը և համակարգումը: Այս ուղղությամբ ՀՀ կառավարությունը օրենսդրական համապատասխան կարգավորման մեջ փոփոխություններ է մշակել:

Էլեկտրոնային առևտուրը կանոնակարգող օրենսդրական դաշտի բարելավումը հանրային կառավարման բարեփոխումների կարևոր տարրերից է: Այս իմաստով Հայաստանում էլեկտրոնային առևտրի և գործարքների էլեկտրոնային եղանակով կնքման համար իրավահարաբերությունների կարգավորման նպատակով մշակվել են օրենսդրական մի շարք փոփոխություններ: Վերջիններս պետք է նպաստեն Հայաստանում էլեկտրոնային հասարակությանը բնորոշ ծառայությունների զարգացմանը, էլեկտրոնային առևտրի ընձեռած հնարավորությունների օգտագործմանը, տեղական և օտարերկրյա գործարարների միջև առավել սերտ կապերի խթանմանը, ընկերությունների կողմից նորարարությունների մեջ ներդրումների իրականացմանը:

Հանրային կառավարման արդիականացման և թափանցիկության ապահովմանն ուղղված կարևոր քայլ էր դեռևս 2010 թվականին ՀՀ կառավարության կողմից գործարկված www.e-gov.am էլեկտրոնային կառավարման պորտալը: Վերջինիս միջոցով մեկտեղվել են պետական գերատեսչությունների էլեկտրոնային կառավարման բոլոր գործիքներն ու տվյալների շտեմարանները, և դրանց օգտագործման հարմարավետ միջավայր է ապահովվել: Պորտալում մատուցվում են մի շարք էլեկտրոնային ծառայություններ, մասնավորապես, լիցենզիաների հայտերի էլեկտրոնային ընդունման, կազմակերպությունների էլեկտրոնային գրանցման, հարկային հաշվետվությունների էլեկտրոնային ներկայացման, էլեկտրոնային վիզայի, մտավոր սեփականության գործակալության էլեկտրոնային հայտերի ընդունման և տեղեկատվական որոնման, էլեկտրոնային ստորագրությունների ստացման, ինտերնետով հրապարակային ծանուցման, մեկ անձից կատարվող գնումների, ինտերակտիվ բյուջեի, դատական տեղեկատվական համակարգի և այլ ոլորտներում:

Ներկայումս քայլեր ենք ձեռնարկում նոր էլեկտրոնային ծառայությունների ներդրման և ՀՀ էլեկտրոնային կառավարման համակարգի կատարելագործման ուղղությամբ՝ առաջնորդվելով տվյալների բազաների միջև ամբողջական փոխգործողություն և տվյալների փոխանակման ապահովման սկզբունքով: Մասնավորապես, առաջիկայում նախատեսվում է Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագրի մեկնարկը, որի շրջանակներում նախատեսվում է էլ-կառավարման համակարգերի կառավարման և սպասարկման միասնական կենտրոնի ստեղծում, էլ-կառավարման վերաբերյալ տեխնիկական չափորոշիչների և կանոնների մշակում ու ներդրում՝ ինտերնետի միջոցով պետական տեղեկատվական համակարգերի միջև տվյալների ապահով փոխանակման ապահովման նպատակով, e-gov.am պորտալի և դրա հավելվածների ստեղծում պետություն-քաղաքացի ինտերակտիվ և առցանց ծառայությունները Apple և Android բջջային գործադիր ծրագրերի համար հասանելի դարձնելու նպատակով:

Քաղաքացիական ծառայության քաղաքականությունը

Քաղաքացիական ծառայության քաղաքականության դերը հատկապես կարևորվում է տնտեսության զարգացման հետճգնաժամային տնտեսության զարգացման փուլում, որի տևական զարգացման համար մենք պետք է կարողանանք ներգրավել ու պահել մատչելի որակյալ մարդկային կապիտալ: Սա կբարելավի հաղորդակցությունը պետական ու մասնավոր հատվածի միջև և Կառավարման կանոնակարգերի բարելավման ճանապարհով հնարավոր կլինի զարկ տալ և ոչ թե խոչընդոտել Հայաստանի տնտեսական համակարգի մրցունակությանը: Նախատեսվում է առաջիկայում կատարելագործել նաև քաղաքացիական ծառայողների մոտիվացման մյուս գործիքը՝ քաղաքացիական ծառայության կատարողականի վրա հիմնված վարձատրությունը:

Քաղաքացիական ծառայության համակարգում կատարողականի գնահատման համակարգի ներդրումից հետո պարբերական ատեստավորումների համակարգը վերանում է, ինչպես նաև համակարգը ապակենտրոնացման միտում ունի, որը սկսվել է երիտասարդ անձնակազմի աշխատանքի ընդունելու բարելավված ճկունությամբ:

Կառավարությունն աշխատակիցների մոտիվացման համար կավելացնի քաղաքացիական ծառայողների արդյունքների վրա հիմնված հավելավճարները: Արդյունքի վրա հիմնված հավելավճարների ավելացման միջոցառումները նպատակ ունեն մեծացնել հանրային ոլորտի կարողությունն աշխատանքի ընդունել և պահպանել համապատասխան հմտություններով աշխատակիցների: Բանկը կօժանդակի նախնական գործողությանը ներկա համակարգի թերությունների փորձագիտական գնահատման միջոցով:

Պետական ֆինանսների կառավարում

Եվրոպական Միության (ԵՄ) կողմից տրամադրված տեխնիկական աջակցության շրջանակում իրականացվել է Հայաստանի Հանրապետության պետական ֆինանսների կառավարման համակարգի (ՊՖԿՀ) բարեփոխումների 2011-2020թթ. ռազմավարության գնահատման, վերանայման և թարմացման աշխատանքներ: Վերջինիս շրջանակում մշակման փուլում է գտնվում Պետական ֆինանսների կառավարման համակարգի բարեփոխումների վերանայված ռազմավարության և ՊՖԿՀ բարեփոխումների ռազմավարությամբ նախատեսված 2015-2020 թվականներին իրականացվելիք գործողությունների ծրագիրը: Այն ներկայումս քննարկվում է շահագրգիռ պետական մարմինների, հասարակական ու միջազգային գործընկեր կազմակերպությունների հետ:

Մշակված տեխնիկական առաջադրանքի հիման վրա ՊՖԿՀ բարեփոխումների շրջանակում նախատեսվում է իրականացնել Կառավարության ֆինանսական կառավարման տեղեկատվական համակարգի (GFMIS) ներդրմանն ուղղված աշխատանքներ:

ՊՖԿՀ բարեփոխումների իրականացման արդյունքում կապահովի պետական ծախսերի կառավարման արդյունավետությունը՝ բարձրացնելով ընթացակարգերի ու մատուցվող ծառայությունների որակը:

Կառավարությունը կշարունակի նաև գնումների համակարգի բարեփոխումների իրականացումը: Բարեփոխումները հիմնականում ուղղված կլինեն գնումների ոչ մրցակցային ձևերի կիրառության դեպքերի նվազեցմանը, գնումների գործընթացի ավտոմատացմանն ու գնումների գործընթացում ներգրավված անձնակազմի կարողությունների բարձրացմանը: Բարեփոխումների շրջանակում առանձնակի

ուշադրություն կդարձվի նաև գնումների մասին ՀՀ օրենսդրության համապատասխանեցմանը ԱՀԿ պետական գնումների վերանայված համաձայնագրի, ինչպես նաև ԵՏՄ համաձայնագրի պահանջներին:

Կառավարությունը շարունակաբար իրականացնելու է ծրագրային բյուջետավորման ներդրման բարեփոխումները, ստեղծվելու են անհրաժեշտ նախադրյալներ լիարժեք ծրագրային բյուջետավորման անցման համար՝ սկսած 2018 թվականից:

Այդ կապակցությամբ ՀՀ կառավարության կողմից ընթացիկ տարվա օգոստոսին հավանության է արժանացել Հայաստանի Հանրապետությունում ծրագրային բյուջետավորման ամբողջական ներդրման ռազմավարությունը: Ռազմավարությունը հիմնվում է Հայաստանի Հանրապետությունում ծրագրային բյուջետավորման համակարգի ներդրման ուղղությամբ վերջին տարիներին իրականացված միջոցառումների արդյունքների և ձեռքբերումների, ծրագրային բյուջետավորման համակարգի ներդրման և կիրառության հաջողված միջազգային փորձի և Հայաստանի Հանրապետությունում ծրագրային բյուջետավորման համակարգում առկա բացերի և թերությունների վերլուծության վրա:

Ծրագրային բյուջետավորման ամբողջական ներդրման նպատակն է հանրային ծախսերի առաջնահերթությունների սահմանման բարելավումն ու հանրային ֆինանսների կառավարման թափանցիկության, հաշվետվողականության, արդյունավետության և արդյունքայնության բարձրացումը:

Շրջակա միջավայրի ազդեցության գնահատման և հանքարդյունաբերության Ոլորտի օրենսդրական բարեփոխումների ուղղությամբ 2013-2015թթ ընթացքում Կառավարությունը վերանայել է ընդերքօգտագործման ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտը: Այդ կապակցությամբ նշենք, որ 2015 թվականի հունիսի 22-ին՝ «Թափոնների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները, որոնց համապատասխան կատարվել են փոփոխություններ «Ընդերքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում:

Նշենք նաև, որ մի շարք իրավական ակտերի ընդունմամբ ապահովվել է նաև ընդերքօգտագործման իրավունքների տրամադրումը «մեկ պատուհանի» սկզբունքով՝

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի դրույթներին համապատասխան:

Ենթակառուցվածքներ

Ենթակառուցվածքների ոլորտում տարվող քաղաքականությունը լինելու է շարունակական և ուղղված է լինելու պետական ծախսերի արդյունավետության բարձրացման պայմաններում ապահովել խմելու ջրի, որոգման համակարգերի և ճանապարհների կայուն զարգացում, որը ենթադրում է պետության կողմից իրականացնել ինչպես ընթացիկ նորոգում և պահպանություն, այնպես էլ կապիտալ ծախսեր նոր ենթակառուցվածքների ստեղծման համար:

Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ոլորտում գործում են 5 ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ մատուցող ընկերություններ:

Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ոլորտի բարելավման և ֆինանսական կայունության հիմքում դրված են ոլորտի բարեփոխումների շարունակականության ապահովումը, նոր ներդրումային ծրագրերի իրականացումը, ջրային համակարգերի արդյունավետ կառավարումը՝ մասնավոր հատվածի առավել լայն ներգրավվածության միջոցով:

Կառավարությունը ջանալու է տարբեր գործիքների և սկզունքների կիրառման միջոցով՝ ներառյալ պետություն-մասնավոր գործընկերության համագործակցությամբ, վարկային միջոցների հաշվին կատարվող ներդրումների քաղաքականությամբ բարձրացնել երկրում առկա ընկերությունների ծախսերի ծածկման մակարդակը և մատուցվող ծառայությունների որակը:

Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ոլորտի կայունության ապահովման նպատակով վերջին տարիներին իրականացվում են մի շարք միջոցառումներ և ծրագրեր, որոնք կրում են շարունակական բնույթ: Նշված միջոցառումներն ու ծրագրերն ուղղված են կատարելագործելու հաշվառման համակարգերը, ապահովելու հուսալի, անխափան և անվտանգ ջրամատակարարում և ջրահեռացում, բարելավելու մատուցվող ծառայությունների որակը, բարձրացնելու սպասարկող անձնակազմի մասնագիտական ունակությունները: Այդ խնդիրների լուծմանն է ուղղված պետական, ինչպես նաև

ներդրումային և վարկային միջոցների հաշվին իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման բարելավման ծրագրերը:

Ոռոգման ոլորտում ջրամատակարարներ են հանդիսանում 2 ջրառ իրականացնող ընկերություն և 37 ջրօգտագործողների ընկերություններ, որոնք մատակարարում են ոռոգման ջուրը վերջնական սպառողներին, ինչպես նաև ոռոգման ոլորտում նախատեսվում է նոր՝ Վեդի, Կապս, Եղվարդ, Մաստարա, ջրամբարների կառուցում:

Ոռոգման ոլորտում վերջին տարիներին իրականացվել են գործող համակարգերի բարելավման, վերակառուցման և նոր համակարգերի կառուցման աշխատանքներ՝ Համաշխարհային բանկի, Հազարամյակի մարտահրավերների և մի շարք այլ ծրագրերի միջոցով: Արդյունքում վերակառուցվել և կառուցվել են ոռոգման ներքին ցանցեր, մայր ջրանցքներ և պոմպակայաններ: Վերակառուցվել է Մարմարիկի ջրամբարը:

Ոռոգման ոլորտում, ինչպես արդեն նշվեց նախատեսվում է նոր ջրամբարների կառուցում, առկա ենթակառուցվածքների արդիականացում, ինստիտուցիոնալ բարեփոխումների խորացում, մասնակցային կառավարման ամրապնդում, ջրօգտագործողների հետ առավելագույնս թափանցիկ և նոր մակարդակի հարաբերությունների ներդրում:

Տրանսպորտի ոլորտ

Այս ոլորտում ՀՀ կառավարությունը վերջին տարիների ընթացքում ՀՀ պետական բյուջեի, ՀԲ և ԱԶԲ ֆինանսավորմամբ զգալի ներդրումներ է կատարում ճանապարհների վերականգնման և արդիականացման ուղղությամբ: Հաջորդ տարիների ընթացքում ճանապարհային ոլորտի զարգացումը նույնպես կհանդիսանա կառավարության առաջնահերթություններից մեկը:

Ճանապարհային ենթակառուցվածքների ուղղությամբ կատարվող ծախսերը կայուն հիմքերի վրա դնելու նպատակով իրականացվել է ճանապարհների ֆինանսավորման ուսումնասիրություն, որի առաջարկությունների հիման վրա ընդունվել է ՀՀ կառավարության 2015 թվականի հունիսի 25-ի «Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների պահպանման 2015-2025

թվականների ֆինանսավորման ռազմավարությունը հաստատելու մասին» թիվ 873-Ն որոշումը:

Մինչև 2015 թվականի դեկտեմբերի 31-ը ճանապարհային ակտիվների կառավարումը ավելի արդյունավետ դարձնելու նպատակով կներդրվի և կշահագործվի ճանապարհային ակտիվների կառավարման համակարգը, որը կօգնի որոշումներ կայացնել ճանապարհային ենթակառուցների ֆինանսավորման վերաբերյալ:

Միջազգային առաջատար փորձի հիման վրա կմշակվի և կփորձարկվի կատարողականի վրա հիմնված ճանապարհների վերականգնման և պահպանման աշխատանքների գնման միասնական մրցութային փաթեթը և պայմանագիրը: Վերը նշվածի արդյունքում կապահովվի ՀՀ միջպետական և կենսական նշանակության ճանապարհների վերականգնման, պահպանման և շահագործման աշխատանքների կայուն ֆինանսավորումը, ակտիվների ավելի արդյունավետ կառավարումը և 55 տոկոս ճանապարհների ընթացիկ պահպանումը և շահագործումը:

Տարածքային համաչափ զարգացում

Առաջիկա տարիներին ՀՀ կառավարության կարևորագույն խնդիրներից է նաև տարածքային համաչափ զարգացումը: Այդ նպատակով իրականացվելու է մարզերի հարաբերական առավելությունների գնահատում և դրանցով պայմանավորված՝ զարգացման ծրագրերի իրականացում:

Մեծապես կարևորվում է նաև ոչ միայն տարածքների համաչափ զարգացման նպատակով կապիտալ ներդրումների ներգրավումը, այլ նաև՝ դրանց օգտագործման արդյունավետության բարձրացումը: Այս համատեքստում նախատեսվում է ստեղծել մեթոդաբանություն, որը հնարավորություն կընձեռի գնահատել իրականացվելիք կապիտալ ներդրումների արդյունավետությունը այդ տարածաշրջանում աղքատության կրճատման համատեքստում:

ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 1521-Ն որոշմամբ Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամը (ՀՄՆՀ) վերանվանվել է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի, որի նոր կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատվել է ՀՀ կառավարության 2015 թվականի հունիսի 25-ի թիվ 690-

Ն որոշմամբ: Ներկայումս, Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ իրականացվող Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագրի իրականացման իրավասությունը վերապահվել է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի ներքո ակնկալվող գործիքակազմով կգնահատվեն նախատեսվող ծրագրերի միտվածությունը վերը նշված զարգացման ու համաչափության ապահովման խնդիրների լուծմանը, ինչպես նաև իրականացվելիք կապիտալ ներդրումների արդյունավետությունը:

Վարչատարածքային բարեփոխումներ

ՀՀ-ում տեղական ժողովրդավարության ամրապնդման, տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման և իշխանության ապակենտրոնացման քաղաքականության արդյունավետ և համակարգված իրականացումն ապահովելու համար կարևոր նշանակություն ունեն, մասնավորապես, վարչատարածքային բարեփոխումները:

Նախատեսվում է տեղական ինքնակառավարման ոլորտում համաչափորեն կիրառել միջազգային փորձը՝ հատկապես իշխանության ապակենտրոնացման խորացման հնարավորությունը՝ այդ փորձի վերլուծության, տեղայնացման և ներդրման միջոցով: Բարեփոխման արդյունքում կլուծվի տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման և իշխանության ապակենտրոնացման քաղաքականության գերակա խնդիրները՝ կապահովվեն նախադրյալներ ֆինանսական ապակենտրոնացման, տեղական ինքնակառավարման մարմինների կարողությունների ու տեղական ժողովրդավարության զարգացման համար, զգալիորեն կբարձրանա ՏԻՄ-երի գործունեության թափանցիկությունը և հաշվետվողականությունը, համայնքների ֆինանսական անկախությունը և ինքնուրույնությունը: Համայնքների խոշորացման արդյունքում կիրականացվի նաև համամասնական ընտրական համակարգի աստիճանական ներմուծում:

Բարեփոխման հիմնական նպատակը համայնքների կարողությունների հզորացումն է, որը կբարձրացնի համայնքների կողմից իրականացվող ծախսերի արդյունավետությունը՝ նպաստելով ՏԻՄ մակարդակում բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի բարելավմանը:

Զարգացման քաղաքականության գործառնությունների երրորդ ծրագրի նախապայմանների կատարման շրջանակներում իրականացված բարեփոխումները

Վերոնշյալ բարեփոխումների համատեքստում ևս մեկ անգամ հարկ է ամփոփ կերպով շեշտադրում կատարել Զարգացման քաղաքականության գործառնությունների երրորդ ծրագրի նախապայմանների կատարման շրջանակներում իրականացված բարեփոխումների վրա, մասնավորապես՝

1. ՀՀ կառավարության կողմից 2015 թվականի հոկտեմբերի 8-ին հավանության է արժանացել ՀՀ հարկային օրենսգրքի նախագիծը, որը դրվել է լայն քննարկման: Կառավարությունը հանձն է առել մանրամասն քննարկել բոլոր գործընկերների, այդ թվում միջազգային կառույցների և մասնագիտացված կազմակերպությունների հիմնավորված առաջարկները:

2. Հանրային ծառայությունները կարգավորող պետական հանձնաժողովի 2015 թվականի հունիսի 17-ի թիվ 174 որոշման համաձայն բարձրացվել է էլեկտրաէներգիայի սակագինը:

3. ՀՀ Ազգային ժողովի կողմից 2014 թ. դեկտեմբերի 17-ին ընդունվել է «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքն, որն ուժի մեջ է մտել 2015 թ. հունվարի 1-ից, որը ձևավորում է ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման համակարգի իրավական հենքը: 2015 թվականի ընթացքում ընդունվել են նշված օրենքի կիրարկումն ապահովող հիմնական իրավական ակտերը (ՀՀ կառավարության 04.06.2015թ. թիվ 582-Ն որոշումը, 31.08.2015թ. թիվ 984-Ն որոշումը, 10.09.2015թ. թիվ 1061-Ն և 1044-Ն որոշումները):

4. ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել են «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», իսկ 2015 թվականի հունիսի 22-ին՝ «Թափոնների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները, որոնց համապատասխան կատարվել են նաև փոփոխություններ «Ընդերքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում: ՀՀ կառավարության կողմից ընդունված 2015 թվականի

սեպտեմբերի 10-ի թիվ 1038-Ն, թիվ 1042-Ն, թիվ 1043-Ն և 1045-Ն որոշումներով, ինչպես նաև ՀՀ բնապահպանության նախարարի 2015 թվականի օգոստոսի 20-ի թիվ 243-Ն և 244-Ն հրամաններով կարգավորվում են հանքարդյունաբերության թափոնների տրամադրման և կառավարման գործընթացները:

5. Տեսչական համակարգի բարեփոխումների շարունակականությունն ապահովելու նպատակով նոր սերնդի բարեփոխումների իրականացումը՝ 2014 թվականի դեկտեմբերի 17-ին ընդունված «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի և ռազմավարությանը համահունչ, ինչպես արդեն նշվեց նախատեսում է տեսչական մարմինների արդիական և արդյունավետ համակարգի ստեղծում՝ կարգավորելով տեսչական մարմինների իրավական վիճակը, դրանց ստեղծումը (միացումների արդյունքում կամ առանց դրանց կախված կոնկրետ դեպքերից), կառավարումը, գործունեության կազմակերպման սկզբունքները ու առանձնահատկությունները, ինչպես նաև տեսչական մարմինների համար տվյալների փոխանակման միասնական տեղեկատվական համակարգի ստեղծումը: Այդ կապակցությամբ, որպես բարեփոխումների իրականացման «ապացույց», որը թույլ կտա գործնական լուծումները կիրառել նաև առաջիկայում ձևավորվելիք այլ տեսչական մարմինների ձևավորման հարցում, ՀՀ կառավարության սեպտեմբերի 10-ի թիվ 1063-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության շուկայի վերահսկողության տեսչական մարմին ստեղծելու, շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ստեղծումը, շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կանոնադրությունը և կառուցվածքը: Իսկ ՀՀ կառավարության 2015 թվականի հունիսի 18-ի թիվ 677-Ն և 678-Ն որոշումներով, ինչպես նաև ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2015թ-ի հունիսի 29-ի թիվ 856-Ա հրամանով ապահովվել են «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի կիրարկման համար անհրաժեշտ ենթաօրենսդրական ակտերը:

6. ՀՀ Ազգային Ժողովը կողմից 2015 թվականի մայիսի 7-ին վավերացվել է «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին փաթեթը, ինչպես նաև ընդունվել է «Գործունեության ծանուցման մասին» ՀՀ օրենքը լիցենզավորման ենթակա մի շարք գործունեությունների մասով լիցենզավորման պահանջի փոխարեն սահմանելով առավել պարզեցված՝ ծանուցումների մեխանիզմ:

7. Ելնելով «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքից և հաշվի առնելով «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված սկզբունքները՝ ՀՀ կառավարությունը 2015 թվականի օգոստոսի 31-ին ընդունել է «Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից էլեկտրոնային ծառայությունների մատուցման կամ գործողությունների կատարման համար օգտագործվող էլեկտրոնային համակարգերի անվտանգության, փոխգործելիության և տեխնիկական ընդհանուր պահանջները սահմանելու մասին» թիվ 1093-Ն որոշումը:

8. Առևտրի պայմանների դյուրինացման աշխատանքների շրջանակներում փոստային ծառայություններում էլեկտրոնային առևտրի համար մաքսային ընթացակարգերի պարզեցման նպատակով ընդունվել է «Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից միջազգային փոստային կամ սուրհանդակային առաքումներով փոխադրվող ապրանքների մաքսային հայտարարագրերի պարզեցված ձևերը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 1461-Ն որոշումը, որի միջոցով հնարավորություն է ստեղծվել կիրառելու Համաշխարհային փոստային միության իրավական ակտերով սահմանված առաքողի մաքսային հայտարարագրի CN 22, CN 23 և CP 72 ձևերը, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից միջազգային փոստային կամ սուրհանդակային առաքումներով ներմուծվող ապրանքների մաքսային հայտարարագրերի պարզեցված ձևերը:

Լիազորված տնտեսական օպերատորի (LSO) ինստիտուտի ներդրման ուղղությամբ առաջին քայլերն իրականացվել են «Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2014 թվականի մայիսի 20-ի թիվ ՀՕ-46-Ն ՀՀ օրենքով, որով ՀՀ Մաքսային օրենսգրքում ամրագրվեցին Լիազորված տնտեսական օպերատորի հասկացությունը, LSO կարգավիճակ ստանալու համար արտաքին տնտեսական գործունեություն իրականացնողներին ներկայացվող չափանիշները, LSO-ների համար գործող պարզեցված մաքսային ընթացակարգերը և այլն:

2015 թվականի մայիսի 21-ին LSO ինստիտուտի գործնական կիրառման նպատակով ընդունվել են ՀՀ կառավարության թիվ 590-Ն որոշումը, ինչպես նաև ՀՀ ֆինանսների

նախարարի 2015 թվականի հունիսի 15-ի թիվ 392-Ա և 389-Ա, 2015 թվականի օգոստոսի 26-ի թիվ 583-Ն և 584-Ն հրամանները:

9. Ավիացիայի ոլորտի արդիականացման գործընթացի իրավական հիմքի ամբողջական ապահովմանն ուղղված՝ ՀՀ ազգային ժողովի կողմից 2015 թվականի հունիսի 19-ին ընդունվել է ««Ավիացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը: ՀՀ կառավարության կողմից 2015 թվականի օգոստոսի 6-ին ընդունվել են վերոնշյալ օրենքի նորմերի պատշաճ կիրարկումն ապահովող համապատասխան ենթաօրենսդրական ակտերը (ՀՀ կառավարության թիվ 962-Ն, 963-Ն, 964-Ն, 965-Ն և 966-Ն որոշումները):


10. Շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցման համար 2014 թվականի դեկտեմբերի 17-ին ընդունվեց «Շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցման մասին» ՀՀ օրենքը: Իսկ վերջինիս կիրառական կարգավորումները սահմանելու նպատակով ՀՀ կառավարությունը 2015 թվականի մայիսի 14-ին ընդունել է «Շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների վերաբերյալ տվյալների արդիականացման դեպքում գրանցամատյանում գրառված համապատասխան տեղեկությունների՝ ինքնաշխատ կերպով փոփոխման կարգը, ինքնաշխատ կերպով փոփոխման ենթակա տվյալների և այդ տվյալների բազաների ցանկը հաստատելու մասին» թիվ 511-Ն որոշումը և 2015 թվականի հունիսի 10-ին՝ «Շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցամատյանից տեղեկատվություն և քաղվածքներ տրամադրելու կարգը հաստատելու մասին» թիվ 633-Ն որոշումը:

11. Ֆինանսական ոլորտի զարգացմանը նպաստելու, թափանցիկությունը բարելավելու և կայունությունն ամրապնդելու նպատակով՝ կապված ֆինանսական խմբերի համախմբված վերահսկողության իրականացման համար օրենսդրական դաշտի ձևավորման հետ, ՀՀ կենտրոնական բանկի կողմից մշակվել են օրենքների նախագծերի փաթեթներ, որոնցով ներդրվել են ֆինանսական խմբերի իրավական կարգավորման և դրանց համախմբված վերահսկողության առանձնահատկությունները: Նախագծերի փաթեթը 2015 թվականի նոյեմբերի 12-ին ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից:

ՁԲԳ շարքի իրականացման հիմնական գործընկերը ՀՀ կառավարության աշխատակազմն է: ՀՀ վարչապետի 2014 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 901-Ա որոշմամբ Հայաստանի Հանրապետության կառավարության և Համաշխարհային բանկի միջև կնքված «Զարգացման քաղաքականության գործառնություն» ծրագրի համակարգող է նշանակվել Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար Դավիթ Հարությունյանը:

ՁԲԳ-ներով նախատեսված բարեփոխումների արդյունքների վերաբերյալ մոնիտորինգի և գնահատման հիմնական ցուցանիշները կանոնավոր պարբերականությամբ հավաքագրվում և վերլուծվում են ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության կողմից:

Հովիկ Աբրահամյան



Հայաստանի Հանրապետության վարչապետ